ԶԵԴԵԱ

Բնակավայրի վարչական ղեկավար՝ Վահրամ Գյուլամիրյան

Հեռախոս՝ +374.93. 841945

Բնակչություն՝ 170

Գյուղը 1988 թվականի նոյեմբեր ամսից վերաբնակեցվել է Նախիջևանի շրջանի Ազնաբերդ գյուղից արտագաղթած հայերով: Գյուղը գտնվում է մարզկենտրոնից 20 կմ հյուսիս արևելք: Այն փռված է Վարդաբլուր և Հարսնասար լեռների ստորոտում՝ ծովի մակերևույթից բարձր է 1500-1600 մ:

Գյուղն ավելի հին է քան ենթադրվում է, որի վկայությունն են զարդաքանդակներով խաչքարերը և հունական տառերով գերեզմանաքարերի արձանագրությունները, ինչից կարելի է ենթադրել, որ այստեղ ապրել են հայեր, հույներ, ադրբեջանցիներ, որից հետո այս գյուղում իրենց հանգրվանն են գտել Նախիջևանից տեղահանված հայերը: Գյուղի շրջակայքում կա երկու հին գյուղատեղիներ: Գերեզմանաքարերի արձանագրություններից ենթադրվում է, որ գյուղերից մեկը հունական է եղել: Հին հայկական գերեզմանոցի մոտակայքում հայտնաբերվել է ջրաղաց, ինչը թույլ է տալիս ենթադրել, որ գյուղի բնակիչները նախկինում էլ զբաղվել են հացահատիկի մշակությամբ:

Բոլոր ժամանակներում գյուղի հիմնական եկամտի աղբյուրը եղել է հողագործությունը և անասնապահությունը:

Մինչև 1988 թվականը գյուղն անվանվել է Զեյթա, իսկ 1988 թվականի վերաբնակեցումից հետո՝ Զեդեա: Ըստ Ստեփանոս Օրբելյանի՝ դեռ միջնադարում գոյություն է ունեցել Վայոց ձոր գավառի Զեդյա գյուղը: Գյուղի պատմության վերաբերյալ այլ մանրամասներ չկան:

Գյուղը գտնվում է ՀՀ Վայոց ձորի մարզի հյուսիս արևելյան մասում: Սահմանակից է մարզի Ագարակաձոր, Վայք, Մալիշկա ու Ազատեի համայնքներին:

Գյուղի տարածքով անցնում է Արփա գետը:

Գյուղն ունի դպրոց, բուժկետ :